Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայցը ենթակա է բավարարման, իսկ Հայցվորի կողմից նախապես 50,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը եզրահանգում է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից հօգուտ «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության ենթակա է բռնագանձման 50,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի՝ «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 2023թ. մայիսի 5-ի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 2023թ. մայիսի 5-ի որոշումը՝ «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, ճանաչել անվավեր:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից հօգուտ «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության բռնագանձել 50,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 2023թ. օգոստոսի 7-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի կատարումը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

<u>Ծանոթություն</u>: վճիռը մտել է օրինական ուժի մեջ
« » _____ 2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ